

Հավելված
 ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի
 «27» նոյեմբերի 2024 թ.
 N 461- L հրամանի

Հավելված N 1
 ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի
 «30» օգոստոսի 2022 թ.
 N 342-L հրամանի

«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք, «Գնահատման մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 872-Ն, «Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը և դեպքերը սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 877-Ն, «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանելու մասին» 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն ՀՀ կառավարության որոշումներ, «ՀՀ գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1355-Ն որոշման N 4 հավելվածով սահմանված՝ Գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջներ

h/h	Հարց	Պատասխան
1	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտը	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնահատման գործունեության վրա
2	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	մշակութային արժեքների գնահատման վրա
3	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	արժեթղթերի գնահատման վրա
4	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	ածանցյալ ֆինանսական գործիքների (գործարքների) գնահատման վրա
5	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	արժույթային արժեքների գնահատման վրա

6	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	թանկարժեք մետաղների գնահատման վրա
7	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	թանկարժեք քարերի ու թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված զարդերի գնահատման վրա
8	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում	անշարժ գույքի կադաստրային գնահատման վրա
9	ինչով է կարգավորվում գնահատման գործունեությունը	Գնահատման գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության գնահատման ստանդարտներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով
10	ով է գնահատողը	Ֆիզիկական անձ, որն ունի գնահատողի որակավորման գործող վկայական և հաշվառված է լիազոր մարմնի կողմից
11	որն է գնահատման կազմակերպությունը	գնահատման գործունեություն իրականացնող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված է լիազոր մարմնի կողմից
12	որն է լիազոր մարմինը	«Գնահատման գործունեության մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում իրականացնող և որակավորման վկայականի գործողությունը դադարեցնող, գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով գնահատողներին, կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին հաշվառող և հաշվառումից հանող լիազոր մարմին
13	որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը	ոչ առևտրային, անկախ, մասնագիտացված, ինքնակարգավորվող և ինքնաֆինանսավորվող կազմակերպություն, որը գնահատողների մասնագիտացված միություն է և ստեղծված է գնահատողների և գնահատման կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի դրսևորման ու պաշտպանության, նրանց գործնական ու մեթոդական օգնություն ցուցաբերելու և «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնելու համար

14	ինչ է գնահատման ստանդարտը	Կառավարության սահմանած, գնահատման միջազգային ստանդարտներին համահունչ, գնահատումը կանոնակարգող, համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ պարունակող փաստաթուղթ
15	ինչ է իրենից ներկայացնում գնահատումը	գնահատման օբյեկտի արժեքի որոշմանը նպատակաուղղված՝ «Գնահատման գործունեության մասին» օրենքով, գնահատման ստանդարտներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված գնահատման գործողությունների ամբողջությունն է
16	ինչ փաստաթուղթ է գնահատման հաշվետվությունը	փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություն «Գնահատման գործունեության մասին» օրենքով, գնահատման ստանդարտներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատվիրված ամսաթվի դրությամբ որոշված գնահատման օբյեկտի արժեքի վերաբերյալ
17	որն է գնահատման առաջադրանքը	պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որում արտացոլվում են գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև գնահատման նպատակը, գնահատման գործառույթը և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը
18	որն է որակավորման հանձնաժողովը	Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ոլորտում մասնագիտական որակավորման քննություններն անցկացնող, այդ թվում՝ որակավորման քննությունների հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները կազմող հանձնաժողով
19	որն է մասնագիտական հանձնաժողովը	Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության ուսումնասիրություն իրականացնող, գնահատման կազմակերպության և գնահատողների կողմից «Գնահատման գործունեության մասին» օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի, գնահատման ստանդարտների ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով

20	ինչ է իրենից ներկայացնում գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիրը	լիազոր մարմնի ներդրած առցանց աշխատող էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որտեղ մուտքագրվում են «Գնահատման գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տվյալները
21	ով է պատվիրատուն	պատվիրատուն գնահատման աշխատանքներ պատվիրող քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտն է
22	ով է շահառուն	պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք հանդիսանում են գնահատման արդյունքների օգտագործողներ, կամ գնահատման արդյունքները որևէ կերպ առնչվում են իրենց օրինական շահերին
23	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով որոնք են գնահատման սուբյեկտները	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ գնահատման գործունեության սուբյեկտ են համարվում «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված գնահատման կազմակերպությունները, գնահատողները, ինչպես նաև պատվիրատուները
24	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով որոնք են գնահատման օբյեկտները	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ գնահատման օբյեկտներ են համարվում գույքը (անշարժ և շարժական), գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են հանդիսանալ քաղաքացիաիրավական շրջանառության օբյեկտներ, որոնց վերաբերյալ սահմանված են գնահատման ստանդարտներ
25	Գնահատման ստանդարտների և վարքագծի կանոնների սահմանումն ու դրանց կիրառումը	Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը՝ գնահատման միջազգային ստանդարտներին ու վարքագծի կանոններին համահունչ, որոնց կիրառումը պարտադիր է գնահատողների համար
26	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական կամ համայնքային չկառուցապատված հողերի օտարման դեպքերի

27	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում
28	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	պետական կամ համայնքային գույքը վարձակալությամբ հանձնելու դեպքերում, բացառությամբ պետական կամ համայնքային չկառուցապատված հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքերի
29	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	պետական կամ համայնքային կարիքների համար գույք վարձակալելու դեպքերում
30	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	«Գնահատման գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված օբյեկտներն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում
31	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	գույքի բռնագանձման հետևանքով դրա իրացման դեպքերում
32	նշվածներից որևէ գնահատման պարտադիր դեպք	գույքի սեփականատիրոջը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սնանկ ճանաչելու և գույքը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքերում
33	նշվածներից որ տեղեկությունը պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր	գնահատվող օբյեկտի անվանման և նույնականացման վերաբերյալ տեղեկություն
34	նշվածներից որ տեղեկությունը պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր	գնահատման դիմաց վճարի չափի վերաբերյալ տեղեկություն
35	նշվածներից որ տեղեկությունը պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր	գնահատման ստանդարտներով սահմանված և գնահատմամբ որոշվող արժեքի տեսակի վերաբերյալ տեղեկություն
36	նշվածներից որ տեղեկությունը պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր	գնահատման ամսաթվի և տարեթվի վերաբերյալ տեղեկություն
37	նշվածներից որ տեղեկությունը պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր	գնահատման առաջադրանքի վերաբերյալ տեղեկություն
38	նշվածներից որ դեպքում է անձին որպես գնահատող հաշվառելու դիմումը մերժվում	ներկայացված փաստաթղթերը կամ տեղեկություններն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են
39	նշվածներից որ դեպքում է անձին որպես գնահատող հաշվառելու դիմումը մերժվում	անձը չունի գնահատողի գործող որակավորման վկայական

40	Նշվածներից որ դեպքում է անձին որպես գնահատող հաշվառելու դիմումը մերժվում	Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձը Հայաստանի Հանրապետությունում գործող գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ չէ
41	Նշվածներից որ դեպքում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին որպես գնահատման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում	իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ներկայացրած փաստաթղթերն ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են
42	Նշվածներից որ դեպքում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին որպես գնահատման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում	իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին
43	Նշվածներից որ դեպքում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին որպես գնահատման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում	դիմում ներկայացրած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, օրենքի համաձայն, իրավունք չունի զբաղվելու գնահատման գործունեությամբ
44	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատողը հանվում հաշվառումից	իր դիմումի համաձայն
45	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատողը հանվում հաշվառումից	որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում
46	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատողը հանվում հաշվառումից	եթե, իր դիմումի համաձայն, դուրս է եկել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունից և մեկամյա ժամկետում չի դարձել Հայաստանի Հանրապետությունում գործող՝ գնահատողների որևէ ինքնակարգավորվող կազմակերպության անդամ
47	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատողը հանվում հաշվառումից	եթե գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների քանակի առնվազն երկու երրորդի համաձայնությամբ վարքագծի կանոնների խախտման հիմքով դադարեցվել է նրա անդամակցությունը գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը
48	Նշվածներից որ դեպքում գնահատողը լիազոր մարմնում հաշվառումից չի հանվում և շարունակում է զբաղվել գնահատման գործունեությամբ	եթե լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:

49	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատման կազմակերպությունը հանվում հաշվառումից	Երբ գնահատման կազմակերպությունն աշխատանքային պայմանագիր չունի որևէ այլ գործատուի մոտ՝ որպես գնահատող հիմնական հաստիքով չաշխատող, առնվազն մեկ գնահատողի հետ
50	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատման կազմակերպությունը հանվում հաշվառումից	Երբ գնահատման կազմակերպությունը չի ապահովագրել իր գործունեությունը հնարավոր դրամական վնասներից, որոնք կարող են պատճառվել պատվիրատուներին կամ շահառուներին իրենց աշխատակից հանդիսացող գնահատողի կողմից գույքի թերագնահատման կամ գերագնահատման հետևանքով
51	Նշվածներից որ դեպքում է լիազոր մարմնի որոշմամբ գնահատման կազմակերպությունը հանվում հաշվառումից	Վերջին երեք տարում միևնույն գնահատման կազմակերպությունում աշխատող կամ աշխատած երեք և ավելի գնահատողների՝ «Գնահատման գործունեության մասին» օրենքով նախատեսված հիմքերով որակավորման վկայականների դադարեցման դեպքում, եթե որակավորման վկայականի դադարեցման հիմքը գնահատողի՝ տվյալ գնահատման կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածում թույլ տրված խախտումներն են
52	Ինչպես են ձևակերպվում գնահատման արդյունքները	Գնահատման արդյունքները ձևակերպվում են գրավոր փաստաթղթի տեսքով՝ գնահատման հաշվետվությամբ
53	Նշվածներից ինչ չի թույլատրվում գնահատման հաշվետվությունում	Ներառել գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ և եզրակացություններ
54	Նշվածներից ինչ չի թույլատրվում գնահատման հաշվետվությունում	հրապարակել տեղեկություններ, որոնք, օրենքի համաձայն, համարվում են պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք
55	Նշվածներից ինչ չի թույլատրվում գնահատման հաշվետվությունում	գնահատմամբ որոշված արժեքը չարտահայտել համարժեք դրամով
56	Ինչով են սահմանվում գնահատման հաշվետվության վերաբերյալ ընդհանուր պահանջները և դրանցում պարտադիր պարունակվող տեղեկությունները	Գնահատման հաշվետվության վերաբերյալ ընդհանուր պահանջները և դրանցում պարտադիր պարունակվող տեղեկությունները սահմանվում են գնահատման ստանդարտներով
57	Որ մարմինն է սահմանում Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը և կարգը	Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը և կարգը սահմանում է Կառավարությունը

58	Նշվածներից որն է գնահատման գործունեության իրականացման հիմնարար և պարտադիր պայմանը	Գնահատողի անկախությունը
59	Գնահատողն իրավունք ունի	գնահատման ընթացքում գնահատման կազմակերպությունից և պատվիրատուներից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների, իսկ այդ տեղեկատվությամբ գույքի արժեքի արժանահավատությունը պայմանավորված լինելու դեպքում նշելու այդ մասին հաշվետվությունում
60	Գնահատողն իրավունք ունի	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերելու գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարցում կատարելու երրորդ անձանցից՝ տեղեկատվություն ստանալու համար
61	Գնահատողն իրավունք ունի	մասնակցելու իր գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և ծանոթանալու հարցերին առնչվող բոլոր փաստաթղթերին
62	Գնահատողն իրավունք ունի	գնահատման իր գործունեության մասին լիազոր մարմնի ընդունած որոշումները բողոքարկելու դատական կարգով
63	Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի	գնահատման ընթացքում պատվիրատուից պահանջելու անհրաժեշտ տեղեկությունների ապահովում, բացառությամբ օրենքով սահմանված կարգով պետական, ծառայողական, առևտրային, բանկային և ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների
64	Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերելու գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ և այլ տեղեկություններ, այդ թվում՝ հարցում կատարելու երրորդ անձանցից՝ տեղեկատվություն ստանալու համար
65	Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի	անհրաժեշտության դեպքում պայմանագրային հիմունքներով գնահատմանը ներգրավելու այլ մասնագետ(ներ)ի
66	Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի	մասնակցելու իր գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և ծանոթանալու հարցերին առնչվող բոլոր փաստաթղթերին

67	Գնահատման կազմակերպությունն իրավունք ունի	գնահատման իր գործունեության մասին լիազոր մարմնի ընդունած որոշումները բողոքարկելու դատական կարգով
68	Գնահատողը պարտավոր է	Հաշվառման ծրագրում մուտքագրել «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվության վերաբերյալ տվյալները
69	Գնահատողը պարտավոր է	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվության յուրաքանչյուր էջի աջ՝ ներքևի անկյունում, լրացնել Հաշվառման ծրագրի կողմից ձևավորված անհատական համարը
70	Գնահատողը պարտավոր է	ստորագրել հաշվետվության յուրաքանչյուր տպագրված և համարակալված էջ
71	Գնահատողը պարտավոր է	հրաժարվել գնահատման իրականացումից, եթե գնահատման օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ «Գնահատման գործունեության մասին» օրենքով և գնահատման ստանդարտներով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ գնահատման հաշվետվություն կազմելու համար
72	Գնահատողը պարտավոր է	իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս պահպանել գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները
73	Գնահատողը պարտավոր է	պահպանել պատվիրատուից և երրորդ անձանցից գնահատման ընթացքում ստացված փաստաթղթերը՝ հաշվետվությունների թղթային կամ էլեկտրոնային կրկնօրինակների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետի ընթացքում
74	Գնահատողը պարտավոր է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հաշվետվությունների պատճենները կամ դրանցում առկա գույքի արժեքի վերաբերյալ էլեկտրոնային կամ փաստաթղթային տեղեկատվությունը, պատվիրատուներից բացի, տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան մարմիններին
75	Գնահատողը պարտավոր է	չհանդիսանալ մեկից ավելի գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ

76	Գնահատողը պարտավոր է	«Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների անդամ հանդիսանալու դեպքում ապահովել ներկայություն հանձնաժողովների նիստերին:
77	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	գնահատման գործունեություն իրականացնելուց առաջ սահմանված կարգով հաշվառվել լիազոր մարմնում
78	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	գնահատման հաշվետվությունը հաստատել գնահատման կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), ապահովել պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարումը
79	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	պահպանել պատվիրատուից և երրորդ անձանցից գնահատման ընթացքում ստացված փաստաթղթերը՝ հաշվետվությունների թղթային կամ էլեկտրոնային կրկնօրինակների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետի ընթացքում
80	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	ապահովել պատվիրատուներից և երրորդ անձանցից գնահատման ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը
81	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հաշվետվությունների պատճենները կամ դրանցում առկա գույքի արժեքի վերաբերյալ էլեկտրոնային կամ փաստաթղթային տեղեկատվությունը, պատվիրատուներից բացի, տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան մարմիններին
82	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	գնահատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել գնահատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի վերաբերյալ տեղեկանք
83	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	գնահատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնել լիազոր մարմնին

84	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	հրաժարվել գնահատման իրականացումից, եթե գնահատման օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ սույն օրենքով և գնահատման ստանդարտներով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ գնահատման հաշվետվություն կազմելու համար
85	Պատվիրատուն իրավունք ունի	ինքնուրույն ընտրելու գնահատման կազմակերպությունը
86	Պատվիրատուն իրավունք ունի	գնահատման կազմակերպության միջոցով գնահատողից պահանջելու ներկայացնել գնահատողի մասնագիտական որակավորման վկայականի բնօրինակը
87	Պատվիրատուն իրավունք ունի	գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ պարզաբանում ստանալու լիազոր մարմնում կամ վիճարկելու դատարանում
88	Պատվիրատուն իրավունք ունի	գնահատման կազմակերպությունից պահանջելու պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում
89	Պատվիրատուն իրավունք ունի	օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից
90	Պատվիրատուն պարտավոր է	գնահատման կազմակերպությանը կամ գնահատողին տրամադրել գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր, հավաստի տեղեկություններ և անհրաժեշտության դեպքում նաև ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաև ապահովել գնահատվող գույքի տեղագնման հնարավորություն
91	Պատվիրատուն պարտավոր է	չխոչընդոտել գնահատման գործընթացը և չմիջամտել դրան
92	Պատվիրատուն պարտավոր է	պատշաճ կատարել իր պայմանագրային պարտավորությունները
93	Պատվիրատուն պարտավոր է	կրել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պարտականություններ
94	Գնահատման կազմակերպությունը պարտավոր է	ապահովագրել իր գործունեությունը հնարավոր դրամական վնասներից, որոնք կարող են պատճառվել պատվիրատուներին կամ շահառուներին իրենց աշխատակից հանդիսացող գնահատողի կողմից գույքի թերագնահատման կամ գերագնահատման հետևանքով

95	Որքան է կազմում գնահատման կազմակերպության գործունեության պարտադիր ապահովագրման տարեկան նվազագույն չափը	յուրաքանչյուր գնահատողի համար կազմում է 150 միլիոն Հ Հ դրամ
96	Գնահատման կազմակերպությունն ինչ աշխատանքային պայմանագիր պետք է ունենա...	որևէ այլ գործատուի մոտ՝ որպես գնահատող հիմնական հաստիքով չաշխատող, առնվազն մեկ գնահատողի հետ
97	Որ մարմինն է կազմակերպում և իրականացնում որակավորումը և ինչպես	Որակավորումը կազմակերպում և իրականացնում է լիազոր մարմինը՝ որակավորման քննությունների միջոցով
98	Ովքեր կարող են մասնակցել որակավորման քննություններին	Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք
99	Որ մարմինն է սահմանում որակավորման քննությունների անցկացման կարգը	Որակավորման քննությունների անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը
100	Որակավորման քննությունների անցկացման կարգով սահմանվում են...	որակավորման քննության ժամկետները, քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ժամկետները և ձևերը, քննության ժամանակ առաջադրվող հարցերի և խնդիրների քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաև քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:
101	Որ մարմինն է նախապատրաստում քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները	Քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները նախապատրաստում է որակավորման հանձնաժողովը
102	Ով է հաստատում քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները	Քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը
103	Ինչ ժամկետով է տրվում գնահատողի որակավորման վկայականը	Գնահատողի որակավորման վկայականը տրվում է հինգ տարի ժամկետով

104	Վկայականի վերաձևակերպման համար ինչ ժամկետում է գնահատողը պարտավոր իր անվան կամ ազգանվան փոփոխման դեպքում դիմել լիազոր մարմին	Գնահատողի անվան կամ ազգանվան փոփոխման դեպքում այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում, գնահատողը պարտավոր է վկայականի վերաձևակերպման համար դիմել լիազոր մարմին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթեր
105	Որ մարմնում և ինչ ժամկետում է վկայականի վերաձևակերպումն իրականացվում	Վկայականի վերաձևակերպումն իրականացվում է լիազոր մարմնում գնահատողի դիմումը և համապատասխան փաստաթղթերը մուտքագրվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում
106	Ինչ ժամկետում է Լիազոր մարմինը պարտավոր վկայականի կրկնօրինակը տրամադրել գնահատողին	Լիազոր մարմինը պարտավոր է վկայականի կրկնօրինակը տրամադրել գնահատողին դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում
107	Նշվածներից որ հիմքով է վկայականի գործողությունը դադարեցվում մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա կայացված լիազոր մարմնի որոշմամբ և ենթակա է անհապաղ կատարման	գնահատողի դիմումի համաձայն
108	Նշվածներից որ հիմքով որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք չունի որակավորման նոր վկայական ստանալու համար դիմելու վկայականի գործողությունը դադարեցվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում.	եթե գնահատողը մեկ տարվա ընթացքում իր կազմած հինգ և ավելի գնահատման հաշվետվություններում «Գնահատման գործունեության մասին» օրենքով, գնահատման ստանդարտներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների՝ արժեքի վրա ազդող խախտում է կատարել
109	Նշվածներից որ հիմքով որակավորման վկայականի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք չունի որակավորման նոր վկայական ստանալու համար դիմելու վկայականի գործողությունը դադարեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում.	եթե գնահատողը մեկ տարվա ընթացքում իր կազմած 10 և ավելի գնահատման հաշվետվություններում «Գնահատման գործունեության մասին» օրենքով, գնահատման ստանդարտներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների և պայմանների խախտում է կատարել
110	Ինչ կարգով և ինչ ժամկետում կարող է վկայականի ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումը բողոքարկվել	Վկայականի ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումը կարող է օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել դատական կարգով

111	Վկայականի ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի որոշումը դատական կարգով բողոքարկելը կասեցնում է արդյոք վարչական ակտի գործողությունը	Բողոքարկումը չի կասեցնում վարչական ակտի գործողությունը:
112	Որ մարմինն է սահմանում մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը	Մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը
113	Որ մարմինն է ստեղծում մասնագիտական հանձնաժողովը և հաստատում դրա անհատական կազմը	Լիազոր մարմինը ստեղծում է մասնագիտական հանձնաժողովը և հաստատում է դրա անհատական կազմը
114	Լիազոր մարմնի քանի ներկայացուցիչ են ընդգրկվում մասնագիտական հանձնաժողովի կազմում	Մասնագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ
115	Քանի գնահատող, ինչ պայմանների բավարարման դեպքում և ինչ ժամկետով են ընդգրկվում մասնագիտական հանձնաժողովի կազմում	Մասնագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նվազագույնը երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող հինգ գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով:
116	Քանի գնահատողի թեկնածություն կարող է առաջարկել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրը մասնագիտական հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրը մասնագիտական հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով կարող է առաջարկել մեկ գնահատողի թեկնածություն
117	Որ մարմինն է հաստատում գնահատողների կազմած գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցը	գնահատողների կազմած գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցը հաստատում է լիազոր մարմինը

118	Ինչ հաճախականությամբ միևնույն գնահատողը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցում	միևնույն գնահատողը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցում ոչ ավելի հաճախ, քան երկու տարին մեկ
119	Որ մարմինն է հաստատում որակավորման քննությունների հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները	որակավորման քննությունների հարցաշարերը, առաջադրվող հարցերը և խնդիրները հաստատում է լիազոր մարմինը
120	Որ մարմինն է հաստատում որակավորման վկայականի ձևը	Որակավորման վկայականի ձևը հաստատում է լիազոր մարմինը
121	Որ մարմինն է կազմակերպում և անցկացնում գնահատողների մասնագիտական որակավորման քննությունները	գնահատողների մասնագիտական որակավորման քննությունները կազմակերպում և անցկացնում է լիազոր մարմինը
122	Որ մարմինն է իրականացնում հսկողություն գնահատման կազմակերպությունների և գնահատողների կողմից «Գնահատման գործունեության մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերի, նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ	Լիազոր մարմինը մասնագիտական հանձնաժողովի միջոցով
123	Որ մարմինն է գնահատման կազմակերպության ղեկավարին և գնահատողին տրամադրում Հաշվառման ծրագիր մուտք գործելու մուտքանուն և գաղտնաբառ	Լիազոր մարմինը
124	Որ մարմինն է հաստատում վերապատրաստման դասընթացների ծրագիրը	Վերապատրաստման դասընթացների ծրագիրը գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների առաջարկությամբ հաստատում է լիազոր մարմինը
125	Ինչպիսի կազմակերպությունն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը ոչ առևտրային, անկախ, մասնագիտացված, ինքնակարգավորվող և ինքնաֆինանսավորվող կազմակերպություն է

126	Ինչով է կարգավորվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեությունը	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեությունը կարգավորվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ
127	Երբ է ծագում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը ծագում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով, լիազոր մարմնում հաշվառվելու պահից սկսած
128	Առավելագույնը քանի ինքնակարգավորվող կազմակերպություն կարող են հաշվառվել լիազոր մարմնում	Լիազոր մարմնում կարող են հաշվառվել առավելագույնը հինգ ինքնակարգավորվող կազմակերպություններ:
129	Որ դեպքում է Կազմակերպությունը հաշվառվում որպես գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն	Կազմակերպությունը հաշվառվում է որպես գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն միայն այն դեպքում, երբ այդ կազմակերպությանն անդամակցում է լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների քանակի առնվազն 10 տոկոսը:
130	Երբ և ինչպես կարող է լուծարվել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը	«Գնահատման գործունեության մասին» օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև իր կանոնադրության բազմակի կամ կոպիտ խախտումների համար գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է լուծարվել դատարանի որոշմամբ՝ լիազոր մարմնի կամ շահագրգիռ անձանց դիմումով
131	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների հաշվառման համար ներկայացված հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը ինչ պայմաններով է հաստատում Լիազոր մարմինը	Լիազոր մարմինն ուսումնասիրում է ներկայացված հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը, որոնց հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է դրանք և կայացնում որոշում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառելու վերաբերյալ:
132	Նշվածներից որ սկզբունքով է առաջնորդվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության ընթացքում	ինքնակարգավորվող կազմակերպությունների անկախություն պետական մարմիններից, պատվիրատուներից և շահառուներից
133	Նշվածներից որ սկզբունքով է առաջնորդվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության ընթացքում	ինքնակարգավորման գործընթացների թափանցիկություն

134	Նշվածներից որ սկզբունքով է առաջնորդվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության ընթացքում	ինքնակարգավորման գործընթացների անկախ և կայուն ֆինանսավորման ապահովվածություն
135	Նշվածներից որ սկզբունքով է առաջնորդվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության ընթացքում	պատվիրատուների և շահատուների նկատմամբ ինքնակարգավորվող կազմակերպության անդամների պատասխանատվության ապահովում
136	Նշվածներից որ սկզբունքով է առաջնորդվում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության ընթացքում	կազմակերպության անդամների կողմից գնահատման գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների, ինչպես նաև վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով գնահատողների ինքնակարգավորման կազմակերպության կազմակերպական համակարգում մասնագիտական օղակների առկայության ապահովում
137	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատողների և գնահատման կազմակերպությունների շահերի պաշտպանում
138	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատման ոլորտի կայացմանը և ընդլայնմանն աջակցում
139	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատման ոլորտում մեթոդական աջակցության և խորհրդատվության տրամադրում
140	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	վերապատրաստման դասընթացների կազմակերպում և անցկացում

141	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատման ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցում և փորձի փոխանակում
142	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատողի մասնագիտության ճանաչելիության, վարկանիշի և վստահելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացում
143	Նշվածներից որն է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներից	գնահատման ոլորտին վերաբերող մասնագիտական գրականության հավաքում, մշակում, կազմում և հրատարակում
144	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վիճարկելու պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական անձանց որոշումները, գործողությունները կամ անգործությունը, որոնց հետևանքով խախտվում են գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության և իր անդամ գնահատողների օրինական շահերը կամ իրավունքները
145	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի	«Գնահատման գործունեության մասին» օրենքով կամ իր կանոնադրությամբ սահմանված նպատակների և գործառույթների իրականացման նպատակով պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններից և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանված գաղտնիք պարունակող տեղեկությունների
146	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի	անդամակցելու գնահատողների միջազգային կազմակերպությունների
147	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի	իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով սահմանելու ու հավաքագրելու անդամավճարներ և օրենքով չարգելված աղբյուրներից ներգրավելու ֆինանսական միջոցներ
148	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի	օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից

149	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	«Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառվել լիազոր մարմնում
150	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	պահպանել «Գնահատման գործունեության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված պահանջները
151	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	ներկայացնել ու պաշտպանել իր անդամների օրինական շահերը և իրավունքները պետական կառավարման մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, գնահատողների միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև այլ կազմակերպություններում
152	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	կազմել և մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնել իր կողմից հաջորդ տարի իրականացման ենթակա վերապատրաստման դասընթացների ծրագիրը
153	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպել և անցկացնել վերապատրաստման դասընթացներ լիազոր մարմնի հաստատած ծրագրին համապատասխան
154	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը լիազոր մարմին ներկայացնել իր անդամ գնահատողների թեկնածությունները հաջորդ տարվա որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով: Ընդ որում, միևնույն գնահատողը չի կարող միաժամանակ առաջարկվել և՛ որակավորման, և՛ մասնագիտականուղղ. հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով
155	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	ընթացք տալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումներին՝ ուղղված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների գործողություններին կամ անգործությանը
156	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	վարել և հրապարակել գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների գրանցամատյանը
157	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	իրականացնել իր անդամների կողմից «Գնահատման գործունեության մասին» օրենքի, ստանդարտների և այլ նորմատիվ իրավական ակտերի, իր կանոնադրությամբ սահմանված պահանջների, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն

158	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	«Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված դեպքերում մերժել անդամակցելու հայտ ներկայացնողին կամ դադարեցնել գնահատողի անդամակցությունը
159	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	յուրաքանչյուր եռամսյակ ոչ ուշ, քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը իր պաշտոնական կայքում հրապարակել տեղեկություններ գնահատողների ինքնակարգավորվող մարմնի իրականացրած գործողությունների վերաբերյալ
160	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը իր պաշտոնական կայքում հրապարակել կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունները
161	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	կատարել հաշվառման համար իր կողմից ներկայացված ծրագրի առնվազն 80 տոկոսը
162	Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է	լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով ներկայացնել ամենամյա հաշվետվություններ
163	Նշվածներից որ դեպքում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ հանվում հաշվառումից	12 օրացուցային ամիսների ընթացքում ավելի քան 60 օր կազմակերպությանն անդամակցող գնահատողների քանակը պակաս է լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների քանակի 10 տոկոսից
164	Նշվածներից որ դեպքում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ հանվում հաշվառումից	եթե ինքնակարգավորվող կազմակերպությունը չի կատարում հաշվառման ներկայացված իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակացույցով սահմանված ժամկետների երկու և ավել անգամ խախտումներով
165	Նշվածներից որ դեպքում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ հանվում հաշվառումից	եթե լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները, կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը
166	Նշվածներից որ դեպքում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ հանվում հաշվառումից	հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում
167	Նշվածներից որ դեպքում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնի որոշմամբ հանվում հաշվառումից	«Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված դեպքերում որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով գնահատողի թեկնածություն չառաջարկելու դեպքում

168	Ինչ իրավական ակտերով են կարգավորվում Հաշվետվությունների ուսումնասիրությունների, ներառյալ նախնական և վերջնական մասնագիտական եզրակացությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները	կարգավորվում են «Գնահատման գործունեության մասին» օրենքով, ՀՀ գնահատման ստանդարտներով, գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով, ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով
169	Որ մարմինն է կազմակերպում և իրականացնում հաշվետվությունների ուսումնասիրությունները	Հաշվետվությունների ուսումնասիրությունները կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն գնահատման մասնագիտական հանձնաժողովի միջոցով
170	Երբ են իրականացվում Հաշվետվությունների ուսումնասիրությունները	Հաշվետվությունների ուսումնասիրություններն իրականացվում են գնահատման գործունեության սուբյեկտների և շահառուների դիմումների հիման վրա, կոմիտեի նախաձեռնությամբ կամ կոմիտեի ղեկավարի հաստատած՝ ուսումնասիրությունների իրականացման տարեկան ժամանակացույցի համաձայն
171	Երբ և ինչ իրավական ակտով է սահմանվում գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման հաջորդ տարվա ժամանակացույցը	Հաջորդ տարվա ժամանակացույցը կոմիտեի ղեկավարի հրամանով հաստատվում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ից ոչ ուշ
172	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	կախված գնահատվող օբյեկտից, գնահատման առաջադրանքից և նպատակից օգտագործված գնահատման մոտեցումների համապատասխանությունն ստանդարտին
173	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	կախված գնահատվող օբյեկտից և գնահատման նպատակից գնահատման հաշվետվությունում արտացոլված տվյալների համապատասխանությունն «Գնահատման գործունեության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության գնահատման ստանդարտներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պարտադիր պահանջներին և պայմաններին

174	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	գնահատվող օբյեկտի նույնականացնող փաստաթղթերը
175	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	ծախսային մոտեցման իրականացման շրջանակում գնահաշվարկը
176	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	համեմատական մոտեցման իրականացման շրջանակում գնահաշվարկը
177	Նշվածներից որն է պարտավոր ուսումնասիրել և ստուգել գնահատման մասնագիտական հանձնաժողովը	եկամտային մոտեցման իրականացման շրջանակում գնահաշվարկը
178	Ում կողմից են ստորագրվում մասնագիտական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները	Մասնագիտական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:
179	Ինչ իրավական ակտերի հիման վրա է գործում գնահատման մասնագիտական հանձնաժողովը	Գնահատման մասնագիտական հանձնաժողովը գործում է «Գնահատման գործունեության մասին» օրենքի, իրավական այլ ակտերի և գնահատման մասնագիտական հանձնաժողովի կանոնա-դրության հիման վրա
180	Գնահատման մասնագիտական հանձնաժողովի խնդիրներն ու նպատակներն են՝	իր իրավասության սահմաններում ապահովել ՀՀ գնահատման գործունեության կազմակերպման և իրականացման աշխատանքների օրենսդրությանը համապատասխան վարումը և աջակցել Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության զարգացմանը և կայացմանը
181	Ինչ իրավական ակտով է հաստատվում գնահատման մասնագիտական հանձնաժողովի կազմը	Գնահատման մասնագիտական հանձնաժողովի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանով
182	Քանի անդամից է կազմված գնահատման մասնագիտական հանձնաժողովը	Գնահատման մասնագիտական հանձնաժողովը կազմված է առնվազն 7 անդամից՝ կոմիտեի ներկայացուցիչ հանդիսացող նախագահից, քարտուղարից, ինչպես նաև գնահատողներից

183	Գնահատման մասնագիտական հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով...	դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ
184	Գնահատման մասնագիտական հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ում...	վերջին հինգ տարում հանձնաժողովի եզրակացության հիման վրա, կոմիտեի ղեկավարի հրամանով որակավորման վկայականը դադարեցվել է
185	Հայաստանի Հանրապետությունում «Գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության բնագավառում Հաստատունեոհ	Կադաստրի կոմիտեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվող որակավորման քննությունների միջոցով
186	ինչ հաճախականությամբ է անցկացվում որակավորման քննությունը	Որակավորման քննություն անցկացվում է առնվազն մեկ անգամ՝ յուրաքանչյուր 3 ամսվա ընթացքում
187	Որ մարմինն է ընդունում որակավորման քննությունները	Որակավորման քննություններն ընդունում է Հայաստանի Հանրապետության տարածքում գնահատման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը
188	Նշվածներից որ գործառույթն է իրականացնում ՀՀ տարածքում գնահատման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը	կազմակերպում է հայտատուների մասնագիտական որակավորման քննությունների անցկացման աշխատանքները
189	Նշվածներից որ գործառույթն է իրականացնում Հ Հ տարածքում գնահատման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը	Որոշում է հայտատուների մասնագիտական որակավորման քննության անցկացման վայրը, օրը, ժամը և դրա մասին հայտարարությունը տրամադրում է Կոմիտեին՝ վերջինիս պաշտոնական կայքում (www.cadastre.am) հրապարակելու համար
190	Նշվածներից որ գործառույթն է իրականացնում Հ Հ տարածքում գնահատման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը	Նախապատրաստում է քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերն ու խնդիրները և դրանք ներկայացնում է Կոմիտեի ղեկավարի հաստատմանը
191	Նշվածներից որ գործառույթն է իրականացնում Հ Հ տարածքում գնահատման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովը	ամփոփում է որակավորման քննության արդյունքները, կազմում և Կոմիտեի ղեկավարին է ներկայացնում արդյունքների վերաբերյալ եզրակացություն պարունակող արձանագրություն

192	Երբ է հրապարակվում որակավորման քննության անցկացման մասին հայտարարությունը	Որակավորման քննության անցկացման մասին հայտարարությունը հրապարակվում է որակավորման քննությունն անցկացվելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ
193	Որակավորման քննության անցկացման մասին հայտարարությունը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից սկսած ինչ ժամանակահատվածում դիմումը և կից փաստաթղթերը հայտատուները կարող են ներկայացնել	Հայտատուները դիմումը և կից փաստաթղթերը կարող են ներկայացնել որակավորման քննության մասին հայտարարությունը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում
194	Որ դեպքում հայտատուները չեն կարող դիմել որակավորման վկայական ստանալու համար	Հայտատուները չեն կարող դիմել որակավորման վկայական ստանալու համար, եթե դիմումատուի գնահատման գործունեության վերաբերյալ լիազոր մարմնում դիմումի ընդունման պահի դրությամբ հարուցված է վարչական վարույթ
195	Որակավորման քննությանը մասնակցելու համար հայտատուները ներկայացնում են՝	անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) պատճենը
196	Որակավորման քննությանը մասնակցելու համար հայտատուները ներկայացնում են՝	պետական տուրքի վճարման անդորագրի պատճենը՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով
197	Որակավորման քննությանը մասնակցելու համար ինչպես է ներկայացնում հայտատուն փաստաթղթերը	Հայտատուն փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով՝ նոտարի վավերացրած կամ հասարակ գրավոր ձևով տրված լիազորագրի հիման վրա, փոստով կամ էլեկտրոնային եղանակով
198	Որակավորման քննության մասնակիցներին ինչ է արգելվում իրենց հետ սենյակ ներս բերել	Որակավորման քննության մասնակիցներին արգելվում է իրենց հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր, որակավորման քննության հարցերի լուծման համար աղբյուր հանդիսացող այլ միջոցներ, բացառությամբ հաշվիչների (calculator)
199	Որակավորման քննության ժամանակ քանի միավոր է գնահատվում յուրաքանչյուր ճիշտ պատասխան	Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1-ից 5 միավոր՝ ըստ հարցի բարդության

200	Որակավորման քննության ժամանակ որ դեպքում է հայտատուն համարվում որակավորումն անցած	Հայտատուն համարվում է որակավորումն անցած որակավորման քննության առաջադրանքից առնվազն 120 միավոր ստանալու դեպքում
201	Որակավորման քննության ժամանակ հայտատուն ինչի վերաբերյալ և ինչ կարգով կարող է բողոքարկել	Որակավորման քննության առաջադրանքի որևէ հարցի կամ դրա պատասխանի ճշտության վերաբերյալ Հայտատուն կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել վերադասության կարգով՝ Կոմիտեի ղեկավարին, ինչպես նաև՝ դատական կարգով
202	Ինչ են կարգավորում գնահատողի վարքագծի կանոնները	Գնահատողի վարքագծի կանոնները կարգավորում են գնահատողների, գնահատման սուբյեկտների և հասարակության միջև փոխհարաբերությունները, հաստատելով միմյանց միջև փոխադարձ հարգանք և վստահություն, ներառելով գործողություններ, որոնք անհրաժեշտ են կատարել (կամ չկատարել) իրենց գործունեության ընթացքում, պահպանելով վարքագծի (վարվելաձևի, բարեվարքության, գործնական էթիկայի և այլն) հիմնարար սկզբունքները
203	Ինչի վրա են հիմնված և ինչին են նպաստում գնահատողի վարքագծի կանոնները	Գնահատողի վարքագծի կանոնները հիմնված են ազնվության, անկեղծության, բարեխղճության, հարգանքի և պատասխանատվության վրա, որոնք նպաստում են գնահատման ոլորտում էթիկայի ամենաբարձր չափանիշների կենսագործմանը
204	Գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներն են.	Անկախություն, ազնվություն, օբյեկտիվություն, կոմպետենտություն, գաղտնիություն
205	Կոմպետենտություն.	պահպանել մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, որպեսզի գնահատման աշխատանքներն իրականացվեն «Գնահատման գործունեության մասին» օրենքին, ՀՀ գնահատման ստանդարտներին և այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան
206	Նշվածներից որն է գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներից	օբյեկտիվություն
207	Նշվածներից որն է գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներից	ազնվություն
208	Նշվածներից որն է գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներից	անկախություն

209	Նշվածներից որն է գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներից	կոմպետենտություն
210	Նշվածներից որն է գնահատողի վարքագծի հիմնական սկզբունքներից	գաղտնիություն
211	Նախատեսված են արդյոք գնահատողի վարքագծի կանոնները գումարային վեճերի լուծման կամ ծառայության ոչ պատշաճ մատուցման գործընթացները կարգավորելու համար	Գնահատողի վարքագծի կանոնները նախատեսված չեն գումարային վեճերի լուծման կամ ծառայության ոչ պատշաճ մատուցման գործընթացները կարգավորելու համար
212	Գնահատողի վարքագծի կանոնները պարտադիր կիրառման ենթակա են արդյոք գնահատողների կողմից	Գնահատողի վարքագծի կանոնները պարտադիր կիրառման ենթակա են գնահատողների կողմից՝ բոլոր դրույթների խիստ պահպանմամբ
213	Գնահատողը պետք է	տիրապետի մասնագիտական գիտելիքներին և հմտություններին, լինի ճշմարիտ և ազնիվ
214	Գնահատողը պետք է	գնահատումը կատարի անկախ, օբյեկտիվ և անաչառ
215	Գնահատողը պետք է	բարձր պահի գնահատողի մասնագիտական վարկանիշը
216	Գնահատողը պետք է	իր վարքագծով նպաստի գնահատողի մասնագիտության նկատմամբ հասարակության վստահության պահպանմանն ու բարձրացմանը
217	Գնահատողը պետք է	հրաժարվի գնահատումն իրականացնելուց, եթե գտնում է, որ չի կարող այն ժամանակին կատարել
218	Գնահատողը պետք է	հրաժարվի գնահատման ծառայություն մատուցելուց, եթե պատվիրատուն կամ շահառուն փորձել են պայմանավորվածություն ձեռք բերել գնահատվող արժեքի մեծության վերաբերյալ կամ անտեղի միջամտել են գնահատման գործընթացի իրականացմանը
219	Գնահատողը պետք է	մինչև այլ գնահատողի կամ մասնագետի օգնությանը դիմելը, համոզվի նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների առկայության մեջ և երաշխավորի, որ իրեն աջակցողները ենթարկվում են գնահատողների վարքագծի կանոններին

220	Գնահատողը պետք է	գնահատումը իրականացնի անհրաժեշտ հետևողականությամբ և գաղտնիության պահպանմամբ, պատշաճ որակով և ողջամիտ ժամկետներում
221	Գնահատողը պետք է	բարեխղճորեն տեղեկություններ հավաքի և հետազոտություններ կատարի, ստուգի օգտագործված բոլոր տվյալների ճշգրիտ և հավաստի լինելը, ինչպես նաև դրանք պահպանի պատշաճ կարգով, որպեսզի հիմնավորվի գնահատման տվյալների հավաստիությունը
222	Գնահատողը պետք է	ապահովի որակյալ և բարեխիղճ ծառայության մատուցում
223	Գնահատողը պետք է	պատվիրատուների հետ շփվի պարզ և հասկանալի ձևով
224	Գնահատողը պետք է	իր ծառայությունների վճարների մասով պատվիրատուների հետ գործի բաց և թափանցիկ
225	Գնահատողը պետք է	պատվիրատուի հետ համաձայնեցնի մատուցվելիք ծառայության շրջանակն ու դրա սահմանափակումները՝ ներառյալ աշխատանքի կատարման համար նախատեսված ժամկետները
226	Գնահատողը պետք է	պատվիրատուների հետ համաձայնեցնի, երբ առաջադրանքով սահմանված գնահատման աշխատանքների պայմաններից որևէ մեկի, ինչպես նաև աշխատանքերի կատարման վճարների կամ ծախսերի փոփոխման անհրաժեշտություն է առաջացել
227	Գնահատողը պետք է	բացահայտի շահերի փաստացի և պոտենցիալ բախումները
228	Գնահատողը պետք է	պարզի և օբյեկտիվորեն գնահատի պատվիրատուների և շահառուների կարիքներն ու նպատակները, նախքան որևէ պատվերի ընդունելը
229	Գնահատողը պետք է	պահպանի գնահատման տվյալների գաղտնիության պայմանները և օգտագործի միայն այն նպատակներով, որոնց համար դրանք տրամադրվել են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի
230	Գնահատողը չպետք է	գործի այնպիսի վարքագծով, որը կարող է մոլորության մեջ գցել և հանգեցնել խաբեության

231	Գնահատողը չպետք է	կազմի և տրամադրի հաշվետվություններ, որոնք կպարունակեն սխալ կամ ուռճացված տեղեկություններ, կանխակալ կամ կեղծ վերլուծություններ և եզրակացություններ
232	Գնահատողը չպետք է	երրորդ անձանց տրամադրի կամ հրապարակի պատվիրատուի կողմից ստացված տվյալները կամ գնահատման արդյունքները, բացառությամբ պատվիրատուի գրավոր համաձայնության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի
233	Գնահատողը չպետք է	տրամադրի խորհրդատվություն կամ ծառայություններ, շահերի բախման կամ դրա առաջացման ռիսկի դեպքում
234	Գնահատողը չպետք է	մուտքեցնի պատվիրատուներին և շահառուներին իր գործողություններով կամ բացթողումներով
235	Գնահատողը չպետք է	թույլ տա այլ անձանց գնահատման աշխատանքների վրա ոչ պատշաճ ազդեցություն ունենալ
236	Գնահատողը չպետք է	իր գործողություններով և քայլերով նպաստի որևէ ֆինանսական հանցագործության՝ ներառյալ փողերի լվացումը, հարկերից խուսափումը, կամ կոռուպցիան
237	Գնահատողը չպետք է	առաջնորդվի անարդար մրցակցության սկզբունքներով՝ առաջարկելով գնահատման ծառայությունների կատարման անիրատեսական ժամկետներ և մատուցված ծառայությունների դիմաց տնտեսապես չհիմնավորված վճարումներ և այլն
238	Գնահատողը չպետք է	գնահատման աշխատանքների ծառայության վճարի չափը փոխկապակցի գնահատվող արժեքի մեծության հետ
239	Գնահատողը չպետք է	թույլ տա այլ գնահատողների նկատմամբ արժանապատվությունը և գնահատողի բարի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ, պատվիրատուին դրդի այլ գնահատողի հետ ունեցած ծառայություններից հրաժարվել, պատվիրատուի հետ քննարկի այլ գնահատողի անձնական կյանքին, նյութական վիճակին, մասնագիտական հմտությունները քննադատող, վարձատրությանը վերաբերող և գնահատման աշխատանքների կատարման հետ չառնչվող այլ հանգամանքներ
240	Գնահատողը չպետք է	կարծիք հայտնի այլ գնահատողի կողմից իրականացված գնահատման հաշվետվության վերաբերյալ (բացառությամբ, եթե հանդիսանում է լիազոր մարմնի կողմից ստեղծված մասնագիտական հանձնաժողովի անդամ)

241	Գնահատողը չպետք է	անհարգալից վերաբերվի այլ գնահատողների անձին, նրանց կարծիքին, իր գործունեությանը վնաս պատճառի գործընկերների բարի համբավին, կազմակերպությանը, որի հետ կնքել է աշխատանքային պայմանագիր
242	Գնահատողը չպետք է	հայտարարություններով մասնագիտական գիտելիքների և հմտությունների մասին անհիմն տեղեկություններ տարածելով վարքաբեկի՝ գերագնահատելով իր կարողություններն ու փորձը այլ գնահատողների նկատմամբ
243	Գնահատողը չպետք է	որևէ գնահատվող օբյեկտի գնահատման ժամանակ ի հայտ եկած խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի երրորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ գնահատող (վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ երրորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը

«ՀՀ գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1355-Ն որոշման N 1 հավելված՝ Գնահատման ընդհանուր ստանդարտ

h/h	Հարց	Պատասխան
1	Ինչ է ներկայացված գնահատման ընդհանուր ստանդարտում	Գնահատման ընդհանուր ստանդարտում ներկայացված են գնահատման բոլոր տեսակի առաջադրանքների իրականացման պահանջները, այդ թվում՝ գնահատման առաջադրանքի պայմանների ձևակերպումը, գնահատման արժեքի տեսակները, գնահատման նախադրյալները, գնահատման մոտեցումներն ու մեթոդները, գնահատման աշխատանքների ընթացակարգը, ինչպես նաև գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պարտադիր պահանջները
2	Ինչ է ներառում գնահատման ընդհանուր ստանդարտը	Գնահատման ընդհանուր ստանդարտը ներառում է միջազգային ստանդարտներին համահունչ, գնահատումը կանոնակարգող, համընդհանուր, պարտադիր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ ինչպես նաև գնահատողների համար սույն ստանդարտներին համապատասխանող ընդհանուր սկզբունքներ
3	Ընդհանուր ստանդարտի ներդրման նպատակն է...	ստեղծել բոլոր տեսակի օբյեկտների համար գնահատման ընդհանուր դրույթներ, ինչը թույլ է տալիս բարձրացնել գնահատման օբյեկտիվությունը, դատողությունների հիմնավորման մակարդակը և գնահատվող օբյեկտի արժեքի տրամադրման որակը, որից ելնելով գնահատման աշխատանքների կատարման ժամանակ գնահատողներից պահանջվում է Ընդհանուր ստանդարտի բոլոր դրույթների խիստ պահպանում

4	Որ սկզբունքներն են բնութագրում գնահատման արժեքի տեսակները	Գնահատման արժեքի տեսակները բնութագրում են այն հիմնարար սկզբունքները, որոնք հիմք են հանդիսանում հաշվետվության մեջ նշված արժեքի համար:
5	Անհրաժեշտ է, որ գնահատման արժեքի տեսակը համապատասխանի...	գնահատման առաջադրանքով սահմանված պայմաններին և նպատակներին
6	Որոնք են գնահատման մեջ օգտագործվող հիմնական մոտեցումները և ինչի վրա են հիմնված դրանք	Համեմատական, եկամտային և ծախսային մոտեցումները գնահատման մեջ օգտագործվող հիմնական մոտեցումներն են: Դրանք բոլորը հիմնված են գնային հավասարակշռության տնտեսական սկզբունքների, փոխարինման կամ շահույթի ակնկալիքների վրա
7	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատողի և գնահատման կազմակերպության տվյալները
8	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը
9	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Պատվիրատուի և ենթադրյալ շահառուների (եթե այդպիսիք կան) վերաբերյալ տվյալները
10	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատվող օբյեկտը, գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը
11	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը)
12	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատվող արժեքի տեսակը
13	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատման ամսաթվերը
14	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Գնահատողի աշխատանքների բնույթն ու ծավալը և դրանց հետ կապված սահմանափակումները
15	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Տեղեկատվության բնույթը և աղբյուրները, որոնց վրա հիմնվում է գնահատողը
16	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Էական և հատուկ ենթադրություններ
17	Նշվածներից որը պետք է ներառվի գնահատման առաջադրանքում	Հաշվետվության օգտագործման, տարածման և հրապարակման սահմանափակումներ
18	Գնահատման աշխատանքների կատարման ընթացքում իրականացված ուսումնասիրությունները պետք է համապատասխանեն...	գնահատման առաջադրանքով սահմանված նպատակներին և արժեքի տեսակին

19	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Շուկայական արժեք
20	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Լիկվիդային արժեք
21	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Շուկայական վարձավճար
22	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Արդարացի արժեք
23	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Ներդրումային արժեք
24	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Վերարտադրման արժեք
25	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Փոխարինման արժեք
26	Նշվածներից որն է գնահատման ընդհանուր ստանդարտով սահմանված գնահատման արժեքի տեսակ	Սիներգետիկ արժեք
27	Որն է շուկայական արժեքի սահմանումը	Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի
28	Գնահատվող օբյեկտի արդյունավետ օգտագործումն իրենից ներկայացնում է այնպիսի օգտագործում,	որը դրա ներուժը հասցնում է առավելագույնին և որը (ֆիզիկապես) հնարավոր է, իրավաբանորեն թույլատրելի և ֆինանսապես իրագործելի

29	Որն է շուկայական վարձավճարի սահմանումը	Շուկայական վարձավճարը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում, գնահատվող օբյեկտի փոխանցումը վարձակալական հիմունքներով, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը իրազեկված լինելով գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի
30	Նշվածներից որը պետք է գնահատողը հաշվի առնի շուկայական վարձավճարի հաշվարկի ժամանակ	Վարձակալության մասին առկա փաստացի պայմանագրի պայմաններում սահմանված շուկայական վարձավճարը «վարձակալական պայմաններին համապատասխան» է ճանաչվում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պայմանները անօրինական են կամ կիրառվող նորմատիվ ակտերին հակասող
31	Նշվածներից որը պետք է գնահատողը հաշվի առնի շուկայական վարձավճարի հաշվարկի ժամանակ	Գնահատվող օբյեկտի շուկայական արժեքը որոշելիս շուկայական վարձավճարը հաշվարկվում է այն ենթադրությամբ, որ նման վարձակալության պայմաններ կհամարվեն հիպոթետիկ վարձակալության պայմանագրի պայմանները, որոնք սովորաբար կարող են ընդունվել, գնահատման ամսաթվին համապատասխան, շուկայում մասնակիցների միջև՝ ըստ համապատասխան սեփականության տեսակի
32	Որն է արդարացի արժեքի սահմանումը	Արդարացի արժեքը դա գնահատվող օբյեկտի կամ պարտավորության փոխանցման հաշվարկային գինն է կոնկրետ նույնականացված, իրազեկ և շահագրգիռ կողմերի միջև, որն արտացոլում է տվյալ կողմերի համապատասխան շահերը:
33	Արդարացի արժեքի սահմանումը ինչպիսի արժեքի գնահատում է պահանջում	Արդարացի արժեքի սահմանումը պահանջում է այնպիսի արժեքի գնահատում, որը հստակ սահմանված կողմերի միջև (գործարքում) արդարացի է համարվում՝ հաշվի առնելով բոլոր առավելությունները և բացասական հատկությունները, որոնք կողմերից յուրաքանչյուրը կարող է ձեռք բերել գործարքի կնքման պահից: Ի տարբերություն, շուկայական արժեքի սահմանման ժամանակ, որպես կանոն, պետք է անտեսել բոլոր առավելությունների կամ բացասական հատկությունների մասին, որոնք, ընդհանուր առմամբ, չեն բնութագրվում կամ մատչելի չեն շուկայի մասնակիցների համար
34	Որն է ներդրումային արժեքի սահմանումը	Ներդրումային արժեքը կոնկրետ կամ հավանական ներդրողի համար գնահատվող օբյեկտի արժեքն է՝ հաշվի առնելով նրա անհատական ներդրումային կամ գործառնական (տնտեսական) նպատակները
35	Երբ է հիմնականում օգտագործվում ներդրումային արժեքը	Ներդրումային արժեքը հիմնականում օգտագործվում է ներդրումների արդյունավետությունը որոշելու համար:
36	Ինչ է արտացոլվում ներդրումային արժեքում	Ներդրումային արժեքում արտացոլվում են այն տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական վիճակը և ֆինանսական նպատակները, որի համար կատարվում է գնահատումը
37	Որն է վերարտադրման արժեքի սահմանումը	Վերարտադրման արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որը հաշվարկվում է գնահատվող օբյեկտի վերարտադրման ծախսերի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

38	Որն է փոխարինման արժեքի սահմանումը	Փոխարինման արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որը հաշվարկվում է գնահատվող օբյեկտի փոխարինման ծախսերի և կուտակված մաշվածության տարբերությամբ
39	Որն է սիներգետիկ արժեքի սահմանումը	Սիներգետիկ արժեքը ստեղծվում է երկու կամ ավելի բաժնեմասերի համադրման կամ օբյեկտների կապակցման արդյունքում, երբ միասնական (համախառն) արժեքի մեծությունը գերազանցում է իրենց առանձին վերցրած արժեքների գումարը: Եթե միայն մեկ հստակ գնորդ է ստանում սիներգետիկ արժեք, ապա այն կտարբերվի շուկայական արժեքից, քանի որ սիներգետիկ արժեքը արտացոլում է օբյեկտի առանձնահատկությունները, որոնք արժեք են ներկայացնում միայն կոնկրետ գնորդի համար: Համապատասխան բաժնեմասերի համախառն արժեքի ավելացումը հաճախ կոչվում է սիներգետիկ (միաձուլման) արժեք
40	Որն է լիկվիդային արժեքի սահմանումը	Լիկվիդային արժեքը գնահատվող օբյեկտի կամ դրանց խմբի մաս-մաս, հարկադիր վաճառքի արդյունքում ստացված գումարն է: Լիկվիդային արժեքը սահմանվում է՝ օգտվելով գնահատման երկու նախապայմաններից՝ կանոնակարգված գործարք սովորական շուկայական ժամկետներում և հարկադրված գործարք՝ շուկայում ցուցադրման նախատեսված ժամկետից ավելի սեղմ (սահմանափակ)
41	Ինչ է անհրաժեշտ հաշվի առնել Լիկվիդային արժեքի հաշվարկում	Լիկվիդային արժեքի հաշվարկում անհրաժեշտ է հաշվի առնել օբյեկտների նախնական վաճառքի նախապատրաստման ծախսերը, ներառյալ դրանց իրականացման համար գործունեության ծախսերը
42	Ինչ է արտահայտում գնահատման նախադրյալը	Գնահատման նախադրյալը արտահայտում է օբյեկտի կամ պարտավորության օգտագործման պայմանները:
43	Նշվածներից որն է գնահատման համար ընդհանուր նախադրյալ	առավել արդյունավետ օգտագործում
44	Նշվածներից որն է գնահատման համար ընդհանուր նախադրյալ	ընթացիկ օգտագործում
45	Նշվածներից որն է գնահատման համար ընդհանուր նախադրյալ	կանոնակարգված օտարում
46	Նշվածներից որն է գնահատման համար ընդհանուր նախադրյալ	հարկադիր վաճառք
47	Ինչպիսին պետք է լինի առավել արդյունավետ օգտագործումը	Առավել արդյունավետ օգտագործումը պետք է լինի ֆիզիկապես հնարավոր (եթե այդ հանգամանքը տեղին է), ֆինանսապես իրագործելի, իրավաբանորեն թույլատրված և հանգեցնի ամենարարժր արժեքին
48	Նշվածներից որն է ներառում առավել արդյունավետ օգտագործման տեսակը որոշելը	Որոշել, թե արդյոք գնահատվող օբյեկտի այս կամ այն օգտագործումը ֆիզիկապես հնարավոր է, այսինքն հաշվի կառնվեն այն օգտագործման ձևերը, որոնք մասնակիցները կհամարեն ողջամիտ

49	Նշվածներից որն է ներառում առավել արդյունավետ օգտագործման տեսակը որոշելը	Իրավաբանորեն թույլատրելիի պահանջը հաշվի առնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գնահատվող օբյեկտի օգտագործման ցանկացած իրավական սահմանափակում (քաղաքաշինական սահմանափակումներ, ինչպես նաև հավանականություն, որ այդ սահմանափակումները կփոխվեն հետագայում և այլն)
50	Նշվածներից որն է ներառում առավել արդյունավետ օգտագործման տեսակը որոշելը	Օգտագործումը ֆինանսապես իրագործելի դարձնելու պահանջը հաշվի է առնում, թե արդյոք գնահատվող օբյեկտի այլընտրանքային օգտագործումը, որը ֆիզիկապես հնարավոր է և իրավաբանորեն թույլատրելի, կբերի արդյոք բավարար եկամուտներ տիպային մասնակցին առավել շատ, քան կստացվեր ընթացիկ օգտագործումից: Այդ դեպքում պետք է հաշվի առնել օբյեկտի այլընտրանքային օգտագործմանը անցնելու ծախսերը
51	Որն է ընթացիկ օգտագործումը	Ընթացիկ օգտագործումը օբյեկտի, պարտավորության կամ օբյեկտների և պարտավորությունների առկա օգտագործումն է: Ընթացիկ օգտագործումը կարող է լինել առավել արդյունավետ օգտագործումը, բայց պարտադիր չէ
52	Որն է կանոնակարգված օտարումը	Կանոնակարգված օտարումը նկարագրում է օբյեկտների խմբի արժեքը, որոնք իրացվելի վաճառքի ընթացքում կարող են իրականացվել գնորդի կամ գնորդների որոնման ողջամիտ ժամանակահատվածի առկայության դեպքում, ընդ որում վաճառողը ստիպված է վաճառել «ինչպես որ կա» (այսինքն ըստ ներկայիս վիճակի և գտնվելու վայրի)
53	Որոշակի օբյեկտի համար որ հետևյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում կարող է Հարկադիր վաճառքը արտացոլել ամենահավանական գինը	ա. վաճառքի ավարտը կարճ ժամանակահատվածում, բ. օբյեկտն ընկնում է գնահատման ամսաթվի դրությամբ կամ որոշակի ժամանակահատվածում գործող շուկայական պայմանների ազդեցության տակ, որի ընթացքում գործարքը պետք է ավարտվի, գ. գնորդը և վաճառողը գործում են ողջամիտ և իրազեկված, դ. վաճառողը հարկադրված է վաճառք իրականացնել, ե. գնորդը շահագրգռված է գործարքի իրականացմանը, զ. երկու կողմերը գործում են իրենց շահերի համաձայն, է. շուկայի ուսումնասիրությունների անցկացման սովորական միջոցառումների կիրառումը հնարավոր չէ առկա կարճ ժամկետի պատճառով
54	Նշվածներից որն է տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործոններից, որոնք կարող են մասնակիցներին հասանելի չլինել	համանման գնահատվող օբյեկտների պորտֆելի ստեղծումից ստացված լրացուցիչ արժեք կամ արժեքի նվազում
55	Նշվածներից որն է տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործոններից, որոնք կարող են մասնակիցներին հասանելի չլինել	գնահատվող օբյեկտի յուրահատուկ փոխազդեցությունը (սիներգիզմ) տնտեսվարող սուբյեկտին պատկանող այլ օբյեկտների հետ

56	Նշվածներից որն է տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործոններից, որոնք կարող են մասնակիցներին հասանելի չլինել	օրենքով սահմանված իրավունքները կամ սահմանափակումները, որոնք կիրառելի են միայն դիտարկվող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ
57	Նշվածներից որն է տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործոններից, որոնք կարող են մասնակիցներին հասանելի չլինել	հարկային արտոնություններ կամ հարկային բեռ, որը կիրառվում է դիտարկվող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ
58	Նշվածներից որն է տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործոններից, որոնք կարող են մասնակիցներին հասանելի չլինել	օբյեկտը օգտագործելու հնարավորություն, որը հանդիսանում է բացառիկ դիտարկվող տնտեսվարող սուբյեկտի համար
59	Ինչին են վերաբերում «Սիներգիաները»	«Սիներգիաները» վերաբերում են օբյեկտների միավորման հետ կապված առավելություններին
60	Գնահատման ժամանակ սիներգիաների դիտարկումը ինչից է կախված	Գնահատման ժամանակ սիներգիաների դիտարկումը կախված է արժեքի տեսակից:
61	Արժեքի տեսակների մեծ մասի համար միայն որ սիներգիաները կարող են դիտարկվել	Արժեքի տեսակների մեծ մասի համար կարող են դիտարկվել միայն այն սիներգիաները, որոնք հասանելի են այլ մասնակիցներին:
62	Արժեքի տեսակը նշելու հետ միաժամանակ, ինչի համար է հաճախ անհրաժեշտ ենթադրություն կամ մի քանի ենթադրություններ նշել	Արժեքի տեսակը նշելու հետ միաժամանակ, հաճախ անհրաժեշտ է ենթադրություն կամ մի քանի ենթադրություններ նշել՝ պարզաբանելու համար գնահատվող օբյեկտի վիճակը հիպոթետիկ փոխանակման գործարքի ժամանակ կամ այն հանգամանքները, որոնց դեպքում ենթադրվում է գնահատվող օբյեկտի փոխանակումը:
63	Նշվածներից որն է այն փաստերի հետ կապված ենթադրություններից, որոնք համապատասխանում են կամ կարող են համապատասխանել գնահատման ամսաթվի դրությամբ առկա փաստերին, հնարավոր է լինեն գնահատողի կողմից ձեռնարկված ուսումնասիրությունների կամ հարցումների սահմանափակման արդյունք	ենթադրություն, որ ձեռնարկության մաս կազմող գնահատվող օբյեկտները փոխանցվում են առանց ձեռնարկատիրության՝ առանձին կամ խմբով
64	Նշվածներից որն է այն փաստերի հետ կապված ենթադրություններից, որոնք համապատասխանում են կամ կարող են համապատասխանել գնահատման ամսաթվի դրությամբ առկա փաստերին, հնարավոր է լինեն գնահատողի կողմից ձեռնարկված ուսումնասիրությունների կամ հարցումների սահմանափակման արդյունք	ենթադրություն, որ առանձին գնահատված օբյեկտը փոխանցվում է այլ լրացուցիչ օբյեկտների հետ միասին

65	Նշվածներից որն է այն փաստերի հետ կապված ենթադրություններից, որոնք համապատասխանում են կամ կարող են համապատասխանել գնահատման ամսաթվի դրությամբ առկա փաստերին, հնարավոր է լինեն գնահատողի կողմից ձեռնարկված ուսումնասիրությունների կամ հարցումների սահմանափակման արդյունք	ենթադրություն, որ բաժնեմասերը փոխանցվում է փաթեթով կամ առանձին
66	Որն է կոչվում «հատուկ ենթադրություն»	Այն դեպքում, երբ ենթադրյալ փաստերը տարբերվում են գնահատման ամսաթվի դրությամբ առկա փաստերից, այն կոչվում է «հատուկ ենթադրություն»
67	Երբ են հաճախ օգտագործվում Հատուկ ենթադրությունները	Հատուկ ենթադրությունները հաճախ օգտագործվում են արտացոլելու համար հնարավոր փոփոխությունների ազդեցությունը գնահատվող օբյեկտի արժեքի վրա, կամ գնահատման ամսաթվի դրությամբ մասնակիցների կողմից չընդունված տեսակետը:
68	Նշվածներից որն է «հատուկ ենթադրություն»	ենթադրություն, որ անշարժ գույքը գտնվում է վարձակալությամբ չծանրաբեռնված լիարժեք սեփականության իրավունքներով
69	Նշվածներից որն է «հատուկ ենթադրություն»	ենթադրություն, որ դիտարկվող շենք-շինությունների փաստացի շինարարությունն ավարտվել է գնահատման ամսաթվի դրությամբ
70	Նշվածներից որն է «հատուկ ենթադրություն»	ենթադրություն, որ կոնկրետ պայմանագիրը գոյություն է ունեցել գնահատման ամսաթվի դրությամբ, թեև այն դեռևս չի կնքվել
71	Նշվածներից որն է «հատուկ ենթադրություն»	ենթադրություն, որ ֆինանսական գործիքը գնահատվում է եկամտաբերության կորի օգտագործմամբ, որը պետք է տարբերվի մասնակցի կողմից օգտագործվածից
72	Բոլոր ենթադրությունները պետք է...	հիմնավորված լինեն փաստաթղթերով ու տեղեկանքներով և համապատասխանեն գնահատման նպատակին
73	Որոնք են գնահատման հիմնական մոտեցումները	համեմատական մոտեցում, եկամտային մոտեցում, ծախսային մոտեցում
74	Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության նպատակն է	գտնել առավել հարմար մեթոդ կոնկրետ հանգամանքներում
75	Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության ժամանակ պահանջվում է հաշվի առնել առնվազն հետևյալը.	գնահատման առաջադրանքի պայմաններին և նպատակին համապատասխան որոշվում են սահմանված արժեքի տեսակը և նախադրյալը
76	Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության ժամանակ պահանջվում է հաշվի առնել առնվազն հետևյալը.	գնահատման հնարավոր մոտեցումների և մեթոդների համեմատաբար ուժեղ և թույլ կողմերը

77	Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության ժամանակ պահանջվում է հաշվի առնել առնվազն հետևյալը.	յուրաքանչյուր մեթոդի նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով գնահատվող օբյեկտի բնույթը և համապատասխան շուկայի մասնակիցների դիրքորոշումը
78	Գնահատման մոտեցումների և մեթոդների ընտրության ժամանակ պահանջվում է հաշվի առնել առնվազն հետևյալը.	մեթոդ(ներ)ի կիրառման համար անհրաժեշտ հավաստի տեղեկատվության առկայություն
79	Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է	գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն
80	Համեմատական մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ունենա երբ...	գնահատվող օբյեկտը մոտակա ժամանակահատվածում վաճառվել է գործարքի արդյունքում
81	Համեմատական մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ունենա երբ...	գնահատվող օբյեկտը կամ համադրելի օբյեկտները ակտիվորեն շրջանառվում են (առաջարկվում են) շուկայում
82	Համեմատական մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ունենա երբ...	առկա են հաճախ կատարվող կամ վերջերս նկատվող գործարքներ համադրելի օբյեկտների հետ կապված
83	Նշվածներից որ լրացուցիչ պայմանի դեպքում է հնարավոր կիրառել համեմատական մոտեցումը և տալ զգալի կշիռ	Գործարքներ, որոնք վերաբերում են գնահատվող օբյեկտին կամ համադրելի օբյեկտներին, բավականաչափ թարմ չեն՝ հաշվի առնելով շուկայում անկայունության և ակտիվության մակարդակները
84	Նշվածներից որ լրացուցիչ պայմանի դեպքում է հնարավոր կիրառել համեմատական մոտեցումը և տալ զգալի կշիռ	Համեմատվող օբյեկտը կամ նմանատիպ օբյեկտները վաճառվում են հրապարակային, բայց ոչ ակտիվորեն
85	Նշվածներից որ լրացուցիչ պայմանի դեպքում է հնարավոր կիրառել համեմատական մոտեցումը և տալ զգալի կշիռ	Շուկայական գործարքների մասին տեղեկատվությունը հասանելի է, բայց համադրելի օբյեկտները զգալի տարբերություններ ունեն գնահատվող օբյեկտից, ինչը պահանջում է սուբյեկտիվ ճշգրտումներ
86	Նշվածներից որ լրացուցիչ պայմանի դեպքում է հնարավոր կիրառել համեմատական մոտեցումը և տալ զգալի կշիռ	Վերջերս իրականացված գործարքների մասին տեղեկատվությունը իրատեսական չէ (այսինքն՝ տեղեկատվության բացակայություն, սինեթետիկ գնորդ, ոչ շուկայական պայմաններում կնքված գործարք, խնդրահարույց վաճառք և այլն)
87	Նշվածներից որ լրացուցիչ պայմանի դեպքում է հնարավոր կիրառել համեմատական մոտեցումը և տալ զգալի կշիռ	Օբյեկտի արժեքի վրա ազդող կարևոր գործոն է հանդիսանում այն գինը, որը կվճարվեր շուկայում, այլ ոչ թե վերարտադրման ծախսերը կամ եկամուտ բերելու կարողությունը
88	Երբ համադրելի շուկայական տեղեկատվությունը ճիշտ նույնական չէ գնահատվող օբյեկտի նկատմամբ, գնահատողը պետք է...	համեմատական վերլուծություն կատարի համադրելի և գնահատվող օբյեկտների որակական և քանակական նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ՝ ճշգրտումների միջոցով
89	Որ մեթոդն է կոչվում նախնական գործարքների մեթոդ	Երբ դիտարկվող համադրելի գործարքները ներառում են գնահատվող օբյեկտը, այս մեթոդը կոչվում է նախնական գործարքների մեթոդ

90	Համադրելի գործարքների կիրառման ժամանակ կարելի է...	օգտվել գնահատման օբյեկտի գնագոյացման ցուցանիշների համեմատական վերլուծության ամենատարբեր արդյունքներից
91	Համադրելի գործարքների մեթոդի ենթատեսակ որն է հանդիսանում և հիմնականում որտեղ է օգտագործվում	Համադրելի գործարքների մեթոդի ենթատեսակ է հանդիսանում մատրիցային գնագոյացումը, որը հիմնականում օգտագործվում է ֆինանսական գործիքների որոշ տեսակների գնահատման համար:
92	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայում մասնակիցների կողմից
93	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	որոշել համապատասխան համադրելի գործարքները և հաշվարկել այդ գործարքների հիմնական գնահատման չափանիշները
94	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	կատարել համադրելի օբյեկտների և գնահատվող օբյեկտների որակական և քանակական նմանությունների և տարբերությունների հետևողական համեմատական վերլուծություն, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից
95	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	կատարել անհրաժեշտ ճշգրտումներ, եթե այդպիսիք կան, գնահատման ցուցանիշներում, որպեսզի արտացոլվի գնահատվող օբյեկտի և համադրելի օբյեկտների տարբերությունները
96	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	դիտարկել օբյեկտի գնահատման համար ճշգրտված ցուցանիշների կիրառում
97	Նշվածներից որն է համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերից	եթե օգտագործվել են գնահատման մի քանի ցուցանիշներ, ստացված արժեքի ցուցանիշների համաձայնեցումը
98	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	մի քանի գործարքների տվյալների առկայությունը որպես կանոն նախընտրելի են մեկ գործարքից
99	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	նույնական օբյեկտների գործարքները առավել ճշգրիտ են արտացոլում արժեքը, քան այն օբյեկտներինը, որոնց գործարքների փաստացի գները պահանջում են զգալի ճշգրտումներ
100	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	գործարքները, որոնք իրականացվում են գնահատման ամսաթվին ավելի մոտ, ավելի հավաստի են շուկայի համար, քան հին թվագրված գործարքները՝ հատկապես անկայուն շուկաներում
101	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	Շատ արժեքի տեսակների համար նախընտրելի է, որ գործարքները իրականացված լինեն խիստ առևտրային հիմունքներով՝ միմյանց հետ կապ չունեցող կողմերի մասնակցությամբ
102	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	գործարքի վերաբերյալ պետք է հասանելի լինի բավարար տեղեկատվություն, որը թույլ է տալիս գնահատողին լիարժեք պատկերացում կազմել համադրելի օբյեկտների մասին և հաշվի առնել գնագոյացման ցուցանիշները, համադրելի տվյալները

103	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	համադրելի գործարքների մասին տեղեկատվությունը պետք է ստացվի վստահելի և հավաստի աղբյուրից
104	Նշվածներից որ համատեքստում գնահատողը պետք է ընտրի համադրելի գործարքներ	փաստացի գործարքները ապահովում են գնահատման համար ավելի ճշգրիտ գործոններ, քան ենթադրյալ գործարքները (առաջարկները)
105	Համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդով գնահատման նպատակով ինչ տեղեկություններ է օգտագործվում	Համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդով գնահատման նպատակով օգտագործվում է հրապարակայնորեն վաճառվող համեմատելի ընկերությունների մասին տեղեկությունները, որոնք նույնական են կամ համադրելի գնահատվող ընկերությանը
106	Նշվածներից որն է համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդի և համադրելի գործարքների մեթոդի տարբերություններից՝ պայմանավորված համադրելի ընկերությունների հանրային շուկայում վաճառքով	գնահատման և համադրելի ցուցանիշները հասանելի են գնահատման ամսաթվի դրությամբ
107	Նշվածներից որն է համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդի և համադրելի գործարքների մեթոդի տարբերություններից՝ պայմանավորված համադրելի ընկերությունների հանրային շուկայում վաճառքով	բաց հրապարակային փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը պատրաստվել է հաշվապահական հաշվառման հայտնի ստանդարտներին համապատասխան
108	համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդը երբ պետք է օգտագործվի	Մեթոդը պետք է օգտագործվի միայն այն դեպքում, եթե գնահատվող օբյեկտը առավել նման է հրապարակայնորեն վաճառվող համադրելի օբյեկտներին, լիարժեք համեմատություն ապահովելու համար
109	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	համապատասխան շուկայի մասնակիցների կողմից օգտագործվող գնահատման տեսակարար ցուցանիշների համադրելի ապացույցների սահմանում
110	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	թիրախային հրապարակայնորեն վաճառվող անալոգային օբյեկտների ընտրություն և այդպիսի հաստատված հիմնական ցուցանիշների հաշվարկ (այսինքն՝ մուլտիպլիկատորներ) նրանց հետ գործարքներում
111	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	գնահատվող օբյեկտի և շուկայում վաճառվող համադրելի օբյեկտների միջև որակական և քանակական նմանությունների և տարբերությունների հետևողական համեմատական վերլուծության անցկացում
112	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	անհրաժեշտության դեպքում գնահատման հաշվարկված ցուցանիշների ճշգրտում՝ հաշվի առնելով դիտարկվող օբյեկտի և հրապարակայնորեն վաճառվող անալոգային օբյեկտների միջև տարբերությունները

113	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	գնահատվող օբյեկտի նկատմամբ ճշգրտված գնահատման ցուցանիշների կիրառում
114	Նշվածներից որն է հանրային համանման գնահատվող օբյեկտների համեմատական մեթոդի օգտագործման հիմնական փուլերից	եթե օգտագործվել են գնահատման մի քանի ցուցանիշներ, ապա հաշվարկվում է յուրաքանչյուր ստացված արդյունքի կշիռը
115	Ինչպես է որոշվում արժեքը եկամտային մոտեցմամբ	Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա:
116	Նշվածներից որ դեպքում պետք է կիրառվի և զգալի կշիռ ստանա եկամտային մոտեցումը	ներդրողի տեսանկյունից գնահատվող օբյեկտի եկամտաբերությունը հանդիսանում է արժեքի վրա ազդող կարևոր գործոն
117	Նշվածներից որ դեպքում պետք է կիրառվի և զգալի կշիռ ստանա եկամտային մոտեցումը	գնահատվող օբյեկտի համար առկա են սպասվելիք եկամտի և ժամկետների ողջամիտ կանխատեսումներ, մինչև ժամանակ, շուկայում առկա է համադրելի օբյեկտների ոչ մեծ քանակություն վերլուծության համար
118	Որն է եկամտային մոտեցման կարևորագույն հիմքը	Եկամտային մոտեցման կարևորագույն հիմքն է հանդիսանում այն, որ ներդրողները ակնկալում են շահույթ ստանալ իրենց ներդրումներից, և որ նման եկամուտը պետք է արտացոլի ներդրումների ռիսկի ենթադրյալ մակարդակը
119	Եկամտային մոտեցման մեթոդները փաստացի ինչի վրա են հիմնված	Եկամտային մոտեցման մեթոդները փաստացի հիմնված են ապագա դրամական հոսքերի գումարների դիսկոնտավորմանը (փոխակերպմանը) ընթացիկ արժեքի: Դրանք դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի տարբերակներն են
120	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	ըստ գնահատվող օբյեկտի և դրա գնահատման առանձնահատկություններից կախված դրամական հոսքի առավել հարմար տեսակի ընտրություն
121	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	դրամական հոսքերի կանխատեսման առավել օպտիմալ կոնկրետ ժամանակահատվածի որոշում
122	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	ամբողջ ժամանակահատվածի համար դրամական հոսքերի կանխատեսման նախապատրաստում
123	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	որոշված կանխատեսվող ժամկետի վերջում մնացորդային արժեքի որոշման անհրաժեշտության դիտարկում, այնուհետև, հաշվի առնելով գնահատվող օբյեկտի բնութագրերը, համապատասխան տերմինալային արժեքի որոշում
124	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	դիսկոնտավորման դրույքաչափի որոշում
125	Նշվածներից որն է դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի հիմնական փուլերից	դիսկոնտավորման դրույքաչափի կիրառումը կանխատեսվող ապագա դրամական հոսքերի նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տերմինալային արժեքը

126	Նշվածներից որ գործոնը պետք է հաշվի առնեն գնահատողները, ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	ցիկլային գնահատվող օբյեկտների գնահատման ժամանակ կանխատեսման ժամկետը ընդհանուր առմամբ պետք է ներառի ամբողջ ցիկլը
127	Նշվածներից որ գործոնը պետք է հաշվի առնեն գնահատողները եկամտային մոտեցմամբ գնահատման ժամանակ, ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	գնահատվող օբյեկտի օգտագործման ժամկետը
128	Նշվածներից որ գործոնը պետք է հաշվի առնեն գնահատողները եկամտային մոտեցմամբ գնահատման ժամանակ, ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	խելամիտ ժամկետում առկա հավաստի տվյալներ, որոնց վրա հիմնվում են կանխատեսումները
129	Նշվածներից որ գործոնը պետք է հաշվի առնեն գնահատողները եկամտային մոտեցմամբ գնահատման ժամանակ, ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	նվազագույն հստակ կանխատեսվող կամ առաջադրված ժամանակահատվածը, որը պետք է բավարար լինի գնահատվող օբյեկտի կայուն աճի և շահույթի մակարդակի հասնելու համար, որից հետո հնարավոր է օգտագործել տերմինալային արժեքը
130	Նշվածներից որ գործոնը պետք է հաշվի առնեն գնահատողները եկամտային մոտեցմամբ գնահատման ժամանակ, ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	ինչ վերաբերում է սահմանափակ ժամկետով օգտակար կիրառություն ունեցող օբյեկտներին, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսական գործիքների մեծ մասը, դրամական հոսքերը, որպես կանոն, կանխատեսվում են օբյեկտի կիրառության ողջ ժամկետում
131	Նշվածներից որը պետք է հաշվի առնել տերմինալային արժեքի մեջ	այն փաստը, թե արդյոք գնահատվող օբյեկտն իր բնույթով սպառվող է՝ արդյունավետ օգտագործման սահմանափակ ժամանակահատված ունի, քանի որ այդ փաստն ազդելու է տերմինալային արժեքի հաշվարկման համար կիրառվող մեթոդի վրա
132	Նշվածներից որը պետք է հաշվի առնել տերմինալային արժեքի մեջ	այն, թե ակնկալվում է արդյոք սահմանված կանխատեսվող ժամանակահատվածի ավարտին նախորդք որոշված գումարի ստացումը
133	Նշվածներից որը պետք է հաշվի առնել տերմինալային արժեքի մեջ	գնահատվող օբյեկտի նկատմամբ ռիսկի սպասվող մակարդակն այն ժամանակահատվածում, երբ որոշվում է տերմինալային արժեքը
134	Նշվածներից որը պետք է հաշվի առնել տերմինալային արժեքի մեջ	ինչ վերաբերում է ցիկլային գնահատվող օբյեկտներին, ապա տերմինալային արժեքը պետք է հաշվի առնի գնահատվող օբյեկտի ցիկլային բնույթը, և դրա որոշման ժամանակ չպետք է եզրահանգել, որ դրամական միջոցների հոսքերի առավելագույն կամ նվազագույն մակարդակը պահպանվելու է անորոշ ժամկետով
135	Նշվածներից որը պետք է հաշվի առնել տերմինալային արժեքի մեջ	գնահատվող օբյեկտին հատուկ հարկային բաղադրիչները կանխատեսվող ժամանակահատվածի ավարտին (եթե անհրաժեշտ է), և այն, թե ենթադրվում է արդյոք, որ նման հարկային բաղադրիչները շարունակելու են գործել անորոշ ժամանակով

136	Նշվածներից որն է տերմինալային արժեքի հաշվարկման ամենատարածված երեք մեթոդներից մեկը	Գորդոնի կամ կայուն աճի մոդել (կիրառվում է միայն անսահմանափակ արդյունավետ օգտագործման ժամկետ ունեցող գնահատվող օբյեկտների համար)
137	Նշվածներից որն է տերմինալային արժեքի հաշվարկման ամենատարածված երեք մեթոդներից մեկը	Ելքի արժեք (կիրառելի է հնացող, սահմանափակ, ինչպես նաև անսահմանափակ արդյունավետ օգտագործման ժամկետ ունեցող գնահատվող օբյեկտների համար)
138	Նշվածներից որն է տերմինալային արժեքի հաշվարկման ամենատարածված երեք մեթոդներից մեկը	օգտահանության ծախսեր (կիրառելի է միայն հնացող, սահմանափակ օգտագործման ժամկետ ունեցող գնահատվող օբյեկտների համար)
139	Ինչին պետք է համապատասխանի դիսկոնտավորման դրույքաչափը	Դիսկոնտավորման դրույքաչափը պետք է համապատասխանի դրամական հոսքերի տեսակին
140	Նշվածներից որն է դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդներից	կապիտալի գնագոյացման մոդել ԿԳՄ (CAPM)
141	Նշվածներից որն է դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդներից	կապիտալի նկատմամբ միջին կշռված ծախսեր ԿՄԿԾ (WACC)
142	Նշվածներից որն է դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդներից	դիտարկվող կամ ստացված դրույքաչափերի և եկամտաբերության հարաբերակցություն
143	Նշվածներից որն է դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդներից	Կումուլյատիվ մեթոդ
144	Դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս գնահատողը պետք է՝	պահպանի դիսկոնտավորման դրույքաչափը որոշելու համար օգտագործված նյութերը
145	Դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս գնահատողը պետք է՝	դիսկոնտավորման դրույքաչափը որոշելու համար տրամադրել հիմնավորումներ, ներառյալ օգտագործված տվյալների նույնականացումը և դրանց ստացման կամ տեղեկատվության սկզբնաղբյուրը
146	Գնահատողները, դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս, ինչ պետք է հաշվի առնեն	Գնահատողները, դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս, պետք է հաշվի առնեն գնահատվող օբյեկտի կանխատեսվող դրամական հոսքին հասնելու ռիսկը: Մասնավորապես, գնահատողը պետք է գնահատի, թե արդյոք կանխատեսվող դրամական հոսքերի ենթադրությունների հիմքում ընկած ռիսկը ներառված է դիսկոնտավորման դրույքաչափում

147	Եթե գնահատողը որոշում է, որ դիսկոնավորման դրույքաչափում կանխատեսվող դրամական հոսքերում ներառված որոշակի ռիսկեր հաշվի չեն առնվել, ապա այդ դեպքում գնահատողը պետք է՝	ճշգրտի կանխատեսումը
148	Եթե գնահատողը որոշում է, որ դիսկոնավորման դրույքաչափում կանխատեսվող դրամական հոսքերում ներառված որոշակի ռիսկեր հաշվի չեն առնվել, ապա այդ դեպքում գնահատողը պետք է՝	ճշգրտի գեղջման դրույքաչափը՝ հաշվի առնելով դեռևս չհայտնաբերված ռիսկերը
149	Ծախսային մոտեցման հիմքում ինչ սկզբունք է ընկած	Ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությանը օբյեկտի ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ
150	Նշվածներից որ հանգամանքում ծախսային մոտեցումը պետք է կիրառվի և նշանակալի կշիռ ստանա	Մասնակիցները կկարողանան վերարտադրել օբյեկտը գրեթե նույն օգտակարությամբ, ինչպես գնահատվող օբյեկտը, առանց որևէ նորմատիվ կամ իրավական սահմանափակումների և այդ օբյեկտը կարող է այնքան արագ վերարտադրվել, որ մասնակիցը չուզենա գնահատվող օբյեկտի անհապաղ օգտագործման հնարավորության համար հավելյալ վճարել
151	Նշվածներից որ հանգամանքում ծախսային մոտեցումը պետք է կիրառվի և նշանակալի կշիռ ստանա	Գնահատվող օբյեկտը ուղղակիորեն եկամուտ չի բերում, իսկ դրա առանձնահատուկ բնույթը թույլ չի տալիս եկամտային կամ համեմատական մոտեցումների կիրառումը:
152	Նշվածներից որ հանգամանքում ծախսային մոտեցումը պետք է կիրառվի և նշանակալի կշիռ ստանա	Օգտագործվող արժեքի տեսակը հիմնականում հիմնված է փոխարինման կամ վերարտադրման ծախսերի վրա:
153	Նշվածներից որ լրացուցիչ հանգամանքի առկայության դեպքում ծախսային մոտեցումը կարող է կիրառվել և զգալի կշիռ ունենալ	Մասնակիցները կարող են հաշվի առնել համադրելի օգտակարության օբյեկտների վերարտադրման հնարավորությունը, սակայն գոյություն ունեն նորմատիվ իրավական բնույթի կամ գնահատվող օբյեկտի վերարտադրման համար անհրաժեշտ ժամանակի զգալի կորուստների հետ կապված սահմանափակումներ
154	Նշվածներից որ լրացուցիչ հանգամանքի առկայության դեպքում ծախսային մոտեցումը կարող է կիրառվել և զգալի կշիռ ունենալ	Գնահատվող օբյեկտը վերջերս է ստեղծվել, ուստի ծախսային մոտեցման կիրառման ժամանակ օգտագործվող ենթադրությունները բարձր հուսալիություն ունեն

155	Որոնք են ծախսային մոտեցման մեթոդները	ա. ծախսերի փոխարինման մեթոդ, բ. ծախսերի վերարտադրման մեթոդ, գ. բաղադրիչային մեթոդ
156	Որ արժեքն է արտացոլում ծախսերի փոխարինման մեթոդը	Ծախսերի փոխարինման մեթոդը արտացոլում է համարժեք օգտակարությամբ նմանատիպ օբյեկտի ստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը
157	Որ արժեքն է արտացոլում ծախսերի վերարտադրման մեթոդը	Ծախսերի վերարտադրման մեթոդը արտացոլում է օբյեկտի ճշգրիտ նմանակի վերստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը
158	Բաղադրիչային մեթոդի կիրառման դեպքում ինչպես է հաշվարկվում գնահատվող օբյեկտի արժեքը	Բաղադրիչային մեթոդի կիրառման դեպքում գնահատվող օբյեկտի արժեքը հաշվարկվում է օբյեկտի առանձին բաղադրիչ մասերի արժեքները գումարելով
159	Եկամտային մոտեցումը տրամադրում է ...	արժեքի ցուցիչ՝ ապագա դրամական հոսքերը փոխակերպելով ընդհանուր ընթացիկ արժեքի
160	Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է ...	գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա
161	Նշել հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ստանա	Ներդրողի տեսանկյունից գնահատվող օբյեկտի եկամտաբերությունը հանդիսանում է արժեքի վրա ազդող կարևոր գործոն
162	Նշել հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը պետք է կիրառվի և զգալի կշիռ ստանա	Գնահատվող օբյեկտի համար առկա են սպասվելիք եկամտի և ժամկետների ողջամիտ կանխատեսումներ, միևնույն ժամանակ, շուկայում առկա է համադրելի օբյեկտների ոչ մեծ քանակություն վերլուծության համար
163	Նշել լրացուցիչ հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը կարող է կիրառվի և զգալի կշիռ ունենալ	Գնահատվող օբյեկտի եկամտաբերությունը մի քանի գործոններից մեկն է, որոնք, ներդրողի տեսանկյունից ազդում են արժեքի վրա
164	Նշել լրացուցիչ հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը կարող է կիրառվի և զգալի կշիռ ունենալ	Գոյություն ունի գնահատվող օբյեկտի սպասվող եկամուտների չափի և ժամկետների վերաբերյալ զգալի անորոշություն,
165	Նշել լրացուցիչ հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը կարող է կիրառվի և զգալի կշիռ ունենալ	Բացակայում է գնահատվող օբյեկտի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը
166	Նշել լրացուցիչ հանգամանքներից մեկը, որով եկամտային մոտեցումը կարող է կիրառվի և զգալի կշիռ ունենալ	Գնահատվող օբյեկտը դեռ չի սկսել եկամուտ բերել, սակայն, ըստ կանխատեսումների կրերի

167	Նշվածներից որ գործոնը Գնահատողները պետք է հաշվի առնեն ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	Գնահատվող օբյեկտի օգտագործման ժամկետ
168	Նշվածներից որ գործոնը Գնահատողները պետք է հաշվի առնեն ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	Խելամիտ ժամկետում առկա հավաստի տվյալներ, որոնց վրա հիմնվում են կանխատեսումները
169	Նշվածներից որ գործոնը Գնահատողները պետք է հաշվի առնեն ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	Նվազագույն հստակ կանխատեսվող կամ առաջադրված ժամանակահատվածը, որը պետք է բավարար լինի գնահատվող օբյեկտի կայուն աճի և շահույթի մակարդակի հասնելու համար, որից հետո հնարավոր է օգտագործել տերմինալային արժեքը
170	Նշվածներից որ գործոնը Գնահատողները պետք է հաշվի առնեն ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	Ցիկլային գնահատվող օբյեկտների գնահատման ժամանակ կանխատեսման ժամկետը պետք է ներառի ամբողջ ցիկլը
171	Նշվածներից որ գործոնը Գնահատողները պետք է հաշվի առնեն ընտրելով հստակ կանխատեսվող ժամանակահատվածը	Սահմանափակ ժամկետով օգտակար կիրառություն ունեցող օբյեկտները՝ ֆինանսական գործիքների մեծ մասը և դրամական հոսքերը կանխատեսվում են օբյեկտի կիրառության ողջ ժամկետում
172	Դիսկոնտավորման դրույքաչափը բացի դրամական միջոցի ժամանակավոր արժեքը պետք է արտացոլի նաև...	այն ռիսկերը, որոնք կապված են օբյեկտի ապագա շահագործման և դրամական հոսքերի տեսակի հետ
173	Որ ուղղումներին է վերաբերում Մաշվածություն (Արժեզրկում/Հնացում) հասկացությունը	Այն ուղղումներին, որոնք իրականացվում են հավասար օգտակարությանը օբյեկտի ստեղծման հաշվարկային ծախսերի նկատմամբ՝ գնահատվող օբյեկտի արժեքի վրա ցանկացած մաշվածության ազդեցության արտացոլման նպատակով
174	Մաշվածության տեսակներն են.	Ֆիզիկական մաշվածություն, ֆունկցիոնալ մաշվածություն, արտաքին կամ տնտեսական մաշվածություն
175	Ֆիզիկական մաշվածությունը դա.	գնահատվող օբյեկտի կամ դրա բաղադրիչների ֆիզիկական մաշվածության պատճառով օգտակարության ցանկացած կորուստն է, որն առաջացել է օգտագործման հետևանքով և տարիքից
176	Ֆունկցիոնալ մաշվածությունը դա.	գնահատվող օբյեկտի անարդյունավետության հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստն է, համեմատած դրա փոխարինման հետ, ինչպիսիք են նախագծումը, տեխնիկական բնութագրերն ու տեխնոլոգիայի հնացած լինելը
177	արտաքին կամ տնտեսական մաշվածությունը դա.	գնահատվող օբյեկտի նկատմամբ արտաքին համարվող տնտեսական կամ տեղական պայմանների հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստն է
178	արտաքին կամ տնտեսական մաշվածություն կարող է լինել	ժամանակավոր

179	արտաքին կամ տնտեսական մաշվածություն կարող է լինել	մշտական
180	Նշել գնահատվող օբյեկտի օգտակար ծառայության ժամկետներից մեկը, որը պետք է հաշվի առնել մաշվածության հաշվարկման ժամանակ	ֆիզիկական ժամկետ
181	Նշել գնահատվող օբյեկտի օգտակար ծառայության ժամկետներից մեկը, որը պետք է հաշվի առնել մաշվածության հաշվարկման ժամանակ	տնտեսական ժամկետ
182	Օգտակար ծառայության ֆիզիկական ժամկետը ցույց է տալիս...	թե որքան երկար ժամանակ կարող է օգտագործվել գնահատվող օբյեկտը մինչ այն մաշված համարվելը կամ երբ նրա վերանորոգումն այլևս տնտեսապես նպատակահարմար չի լինի պլանային սպասարկման պարագայում, առանց հաշվի առնելու վերակառուցման կամ վերասարքավորման որևէ հնարավորություն
183	Օգտակար ծառայության տնտեսական ժամկետը ցույց է տալիս...	թե որքան ժամանակ գնահատվող օբյեկտը կարող է ֆինանսական շահույթ կամ ոչ ֆինանսական օգուտներ բերել իր ընթացիկ օգտագործման մեջ: Դա կախված կլինի դրա ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածության աստիճանից
184	Նշել ֆիզիկական մաշվածության հաշվարկման եղանակները	վերականգնվող և չվերականգնվող
185	Որն է վերականգնվող ֆիզիկական մաշվածությունը	երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված են
186	Որն է չվերականգնվող ֆիզիկական մաշվածությունը	երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված չեն
187	Նշել ֆունկցիոնալ մաշվածության ձևերը	ավելցուկային կապիտալ ծախսեր և ավելցուկային գործառնական ծախսեր
188	Որոնք են ավելցուկային կապիտալ ծախսերը	որոնք կարող են պայմանավորված լինել շինարարության նախագծման, շինարարական նյութերի, արտադրական տեխնիկայի կամ մեթոդների փոփոխություններով, որոնք գնահատվող օբյեկտի համեմատ ավելի ցածր կապիտալ ներդրումներով ժամանակակից համարժեք օբյեկտների հասանելիության են հանգեցնում
189	Որոնք են ավելցուկային գործառնական ծախսերը	որոնք կարող են պայմանավորված լինել նախագծման բարելավումներով կամ ավելորդ արտադրողականությամբ, որոնք գնահատվող օբյեկտի համեմատ հանգեցնում են ավելի ցածր գործառնական ծախսերով ժամանակակից համարժեք օբյեկտների հասանելիությանը
190	Երբ կարող է առաջանալ տնտեսական մաշվածությունը	երբ արտաքին գործոնները ազդում են առանձին օբյեկտների կամ բիզնեսի մեջ օգտագործվող բոլոր օբյեկտների վրա և դրանք պետք է նվազեցվեն ֆիզիկական և ֆունկցիոնալ մաշվածություններից հետո

191	Ինչին է վերաբերում գնահատման մոդելը	Գնահատման մոդելը վերաբերում է փաստաթղթերի գնահատման և հաստատման համար օգտագործվող քանակական մեթոդներին, համակարգերին, տեխնիկաներին և որակական դատողություններին
192	Գնահատման մոդել օգտագործելիս կամ ստեղծելիս գնահատողը պետք է...	վարի համապատասխան գրառումներ՝ մոդելի ընտրությունը կամ ստեղծումը որոշելու համար
193	Գնահատման մոդել օգտագործելիս կամ ստեղծելիս գնահատողը պետք է...	ուսումնասիրի և ապահովի գնահատման արժեքի տեսակի և մասշտաբի, գնահատման մոդելի արդյունքների, էական ենթադրությունների և սահմանափակումների համապատասխանությունը
194	Գնահատման մոդել օգտագործելիս կամ ստեղծելիս գնահատողը պետք է...	հաշվի առնի գնահատման մոդելում արված ենթադրությունների հետ կապված հիմնական ռիսկերը
195	Որոնք են գնահատման աշխատանքների ընթացակարգի հաջորդական փուլերը	նախապատրաստական փուլ և հիմնական փուլ
196	Նշվածներից որն է իրականացվում Նախապատրաստական փուլում	Գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում
197	Նշվածներից որն է իրականացվում Նախապատրաստական փուլում	Գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում
198	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	գնահատվող օբյեկտի տեղագնում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից)
199	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն
200	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն
201	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ
202	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում
203	Նշվածներից որն է իրականացվում հիմնական փուլում	հաշվետվության կազմում և տրամադրում
